ՏԵՂԵԿԱՆՔ

«Ավիացիայի մասին» օրենքի 43-րդ և 47-րդ հոդվածներում առաջարկվող փոփոխությունների և լրացումների վերաբերյալ

Հոդված 43. Օդանավ շահագործողի վկայականի տրման պայմանները

1. Օդային տրանսպորտի թռիչքային անվտանգության նպատակով կոմիտեն տալիս է օդանավ շահագործողի վկայական՝ Կառավարության սահմանած կարգով.

1) Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց, որոնց բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայաբաժնի և այլն) առնվազն 51 տոկոսը սեփականության իրավունքով պատկանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին և (կամ) Հայաստանի Հանրապետությունում ստեղծված (պետական գրանցում ստացած) իրավաբանական անձանց.

2) Կառավարության լիազորված մարմիններին:

2. Օդանավ շահագործողի վկայականը տրվում է, եթե հայտատուն ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Կառավարության սահմանած կարգով պահանջվող ֆինանսական միջոցներ, համապատասխան ապահովագրություն, հմտություններ, գիտելիքներ, փորձառություն, անձնակազմ, հարմարություններ և սարքավորումներ, որոնք անհրաժեշտ են վկայականով նախատեսված գործունեությունն ապահով և հուսալիորեն իրականացնելու համար:

«2.1. Օդանավ շահագործողի վկայականի տրամադրումը կոմիտեի կողմից Կառավարության սահմանած կարգով մերժվում է, եթե օդանավ շահագործողի վկայական ստանալու հայտ ներկայացրած իրավաբանական անձի կառավարման վրա ազդեցության լիազորություն ունեցող անձը (ընկերության խորհրդի անդամ, տնօրեն, խոշոր բաժնեմաս ունեցող անձ) կամ նրա հետ փոխկապակցված անձն ունի տնտեսվարողի վատ հեղինակություն:

2.2. Սույն օրենքի իմաստով տնտեսվարողի վատ հեղինակություն ունեցող անձ է համարվում՝

1) դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձը,

2) դատարանի կողմից ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձը,

3) սնանկ ճանաչված և չմարված (չներված) պարտավորություններ ունեցող անձը,

4) միջազգային հետախուզման մեջ գտնվող անձը,

5) այն իրավաբանական անձի վրա կառավարման լիազորություններ ունեցող անձը, որը նախկինում ունեցել է օդանավ շահագործող վկայական և դրա գործողությունը դադարեցվել կամ կասեցվել է տվյալ անձի մեղքով վկայականի ստացման համար օրենքով և Կառավարության որոշմամբ սահմանված թռիչքային անվտանգության պահանջները խախտելու պատճառով,

6) Կառավարության սահմանված դեպքերում՝ պետության անվտանգության կամ հանցագործությունների կանխարգելման, կամ բացահայտման, կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությամբ պայմանավորված:

3. Օդանավ շահագործողի վկայականը տրվում է որոշակի գործողության ժամկետով, որում նշված են նաև կիրարկվող հատուկ պայմաններն ու սահմանափակումները: Օդանավ շահագործողի վկայականի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել, եթե վկայական ստացած անձը բավարարում է երկարաձգման պահին վկայական տալու համար ներկայացվող պահանջները:

4. Հայաստանի Հանրապետության շահերից ելնելով՝ կոմիտեն սույն հոդվածի 1-ին մասի պայմաններից կարող է կիրառել բացառություններ, եթե կան հատուկ պատճառներ, և օդանավ շահագործողը բազավորվելու է Հայաստանի Հանրապետությունում:

5. Օդանավ շահագործողի վկայական ստացած անձը պարտավոր է կոմիտեին ծանուցել օդանավ շահագործողի վկայական տալու ժամանակ հիմք ծառայած պայմանների վրա հնարավոր ազդեցություն ունեցող ցանկացած փոփոխության մասին: Օդանավ շահագործողի վկայական ստացած անձն իրավունք ունի իրականացնելու միայն դրանով նախատեսված գործունեություն:

Հոդված 47. Վկայականների, թույլտվությունների և հավաստագրի գործողության դադարեցումը և կասեցումը

1. Օդանավ շահագործողի վկայականով, այլ թույլտվությամբ նախատեսված գործունեությունն օրենքների և այլ իրավական ակտերի, հավաստագրում կամ թույլտվություններում նշված հատուկ պայմանների և սահմանափակումների խախտումներով կամ շրջանակներից դուրս իրականացնելու «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում պետական տուրքի գանձման և պետական բյուջե փոխանցման պարտավորությունները չկատարելու դեպքում օդանավ շահագործողի վկայականի

կամ այլ թույլտվության գործողությունը կարող է կասեցվել կոմիտեի կողմից մինչև խախտումների վերացումը կամ մանրամասն ուսումնասիրությունների անցկացումը: Եթե խախտումների վերացման համար տրված ժամկետում կամ ուսումնասիրության անցկացման արդյունքում խախտումները չեն վերացվել, ապա կոմիտեի կողմից օդանավ շահագործողի վկայականի կամ այլ թույլտվության գործողությունը կարող է դադարեցվել: Անվտանգության պահանջներից ելնելով՝ կոմիտեն իրավունք ունի մինչև խախտումների վերացումը, որպես այլընտրանքային միջոց, օդանավ շահագործողի վկայականի նկատմամբ կիրառելու սահմանափակումներ:

~~1.1. Կանոնավոր առևտրային օդային փոխադրումների իրականացման հավաստագիրը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կարող է կասեցնել սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված համապատասխան նախարարությունը մինչև խախտումների վերացումը կամ մանրամասն ուսումնասիրությունների անցկացումը: Եթե խախտումների վերացման համար տրված ժամկետում կամ ուսումնասիրության անցկացման արդյունքում խախտումները չեն վերացվել, ապա սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված համապատասխան նախարարությունը կարող է դադարեցնել առևտրային օդային փոխադրումների իրականացման հավաստագիրը: Անվտանգության պահանջներից ելնելով՝ սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված համապատասխան նախարարությունն իրավունք ունի մինչև խախտումների վերացումը, որպես այլընտրանքային միջոց, առևտրային օդային փոխադրումների իրականացման հավաստագրի նկատմամբ կիրառելու սահմանափակումներ:~~

«1.1. Այն դեպքում, երբ օդանավ շահագործողի վկայական ստացած անձի համար ի հայտ են գալիս սույն օրենքի 43-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված հիմքը, որոնք հնարավոր չէ վերացնել, կոմիտեն Կառավարության սահմանած կարգով դադարեցնում է օդանավ շահագործողի վկայականի գործողությունը:»:

2. Օդանավ շահագործողի վկայականը համարվում է ուժը կորցրած, եթե սույն օրենքի 43-րդ հոդվածի պահանջները դադարում են բավարարված լինելուց: